ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2019թ. օգոստոսի 29-ին տեղի ունեցած նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի.

ՕՐԱԿԱՐԳ

1. Ամբիոնի 2019-2020 ուսումնական տարվա աշխատանքային պլանի քննարկման և հաստատման հարցը:
2. Ամբիոնի դասախոսների 2019-2020 ուսումնական տարվա առարկայական ծանրաբեռնվածության ներկայացման հարցը:
3. Ամբիոնի գծով 2019-2020 ուս տարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների առարկայական նկարագրերի, առարկայական թեմատիկ տրոհումների քննարկման և հաստատման, Classroom էլ.հարթակ ներբեռնելու երաշխավորման հարցը:
4. 2019-2020 ուս տարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների միջանկյալ ստուգման և քննական հարցաշարերի հաստատման հարցը:

ԼՍԵՑԻՆ 1-Ամբիոնի 2019-2020 ուսումնական տարվա աշխատանքային պլանի քննարկման և հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը, Ա. Դալլաքյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել 2019-2020 ուսումնական տարվա աշխատանքային պլանը: Ամբիոնի 2019-20 ուստարվա աշխատանքնային գործունեությունը ծավալել համաձայն աշխատանքային պլանի:

ԼՍԵՑԻՆ 2-Ամբիոնի դասախոսների 2019-2020 ուսումնական տարվա առարկայական ծանրաբեռնվածության ներկայացման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, Ս.Մարությանը

Ամբիոնի վարիչ Վ.Կարապետյանը ներկայացրեց 2019-2020 ուսումնական տարվա առարկայական ծանրաբեռնվածությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ-Հաստատված ծանրաբեռնվածության հիման վրա սկսել աշխատել առարկայական ուսումնամեթոդական փաթեթների շուրջ:

ԼՍԵՑԻՆ 3-Ամբիոնի գծով 2019-2020 ուս տարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների առարկայական նկարագրերի, առարկայական

թեմատիկ տրոհումների քննարկման և հաստատման, Classroom էլ.հարթակ ներբեռնելու երաշխավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, Թ.Նալբանդյանը

Ամբիոնի մասնագետը ներկայացրեց Classroom էլ.հարթակում աշխատանքները կատարելու ժամկետները, ձևաչափերը և աշխատանքի ընթացակարգը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների ԱՈՒՄՓ-ները և ներբեռնել էլ.հարթակ ներկայացված ձևաչափերով: Առարկայական նկարագրերում նշված վերջնարդյունքները համապատասխանեցնել մասնագրի վերջնարդյունքներին: Թեմատիկ տրոհմանը համապատասխան՝ շաբաթական, տեղադրել առարկաների նյութերը:

ԼՍԵՑԻՆ 4. 2019-2020 ուս տարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների միջանկյալ ստուգման և քննական հարցաշարերի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների միջանկյալ ստուգման և քննական հարցաշարերը, դրանք նույնպես տեղադրել էլեկտրոնային հարթակում:

Նիստի նախագահ՝ *Վ.Ս.Կարապետյան*

Նիստի քարտուղար՝ *Թ.Է.Նալբանդյան*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

2019թ. սեպտեմբերի 18-ին տեղի ունեցած նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի.

ՕՐԱԿԱՐԳ

1. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների քննարկման հարցը:
2. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ առկա ուսուցման 3-րդ և 4-րդ կուրսերի ուսումնաճանաչողական և մանկավարժական, ՄԿԾ 2-րդ կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկաների նախապատրաստման և կազմակերպման վերաբերյալ հարցը:
3. 2019-20 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի 2-րդ կուրսի ամբիոնի գծով դասավանդվող դասընթացների առարկայական նկարագրերի, Classroom էլ.հարթակում ուսումնական նյութեր ներբեռնելու քննարկման հարցը:
4. Դասալսումների ժամանակացույցի և կազմակերպման քննարկման հարցը:

ԼՍԵՑԻՆ 1- Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը, Հ.Խաչատրյանը, Ս. Մարությանը, Ա. Դալլաքյանը, Մ.Ավագյանը:

2019-2020 ուսումնական տարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական ատենախոսությունների թեմատիկան, որոնք ներկայացնելիս դասախոսները հաշվի են առել դրանց առավել կապվածությունը պրակտիկ ոլորտի և համալսարանի գիտահետազոտական կենտրոնների հետ: Թեմաների վերնագրերում շեշտադրվել են ժամանակակից տեխնիկաների և մուլտիմեդիոն համակարգի հետ առնչությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Քննարկել և հաստատել 2019-2020 ուսումնական տարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական ատենախոսությունների ղեկավարներին և թեմաները:

ԼՍԵՑԻՆ 2- Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ առկա ուսուցման 3-րդ և 4-րդ կուրսերի ուսումնաճանաչողական և մանկավարժական, ՄԿԾ

2-րդ կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկաների նախապատրաստման և կազմակերպման վերաբերյալ հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Հ.Խաչատրյանը, Ա. Ղազարյանը, Վ.Կարապետյանը:

Սկզբնական կրթության ֆակուլտետի Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգի 3-րդ կուրսի 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակի ուսումնաճանաչողական պրակտիկան կազմակերպվելու է ս/թ. սեպտեմբերի 17-ից մինչև դեկտեմբերի 24-ը (շաբաթական մեկ օր) Երևան քաղաքի թիվ 5 և «Ժպիտներ» մանկապարտեզներում: 4-րդ կուրսի 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակի մանկավարժական պրակտիկան կազմակերպվում է ս/թ. հոկտեմբերի 7-ից մինչև նոյեմբերի 15-ը Երևան քաղաքի «Ժպիտներ», թիվ 26 և «Ամենագետներ» մանկապարտեզներում:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ըստ ներկայացված հրամանների կազմակերպել նշված կուրսերի պրակտիկաները: Ակտիվացնել Classroom էլ. հարթակներ՝ աշխատանքներն էլեկտրոնային հարթակում ևս կազմակերպելու համար: Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ առկա ուսուցման 3-րդ և 4-րդ կուրսերի հետ կազմակերպել առերես և առցանց հանդիպումներ քննարկելու ուսանողների և դասախոսների առաջարկությունները, նկատառումները, մտահոգությունները պրակտիկայի վերաբերյալ:

ԼՍԵՑԻՆ 3- 2019-20 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի 2-րդ կուրսի ամբիոնի գծով դասավանդվող դասընթացների առարկայական նկարագրերի, Classroom էլ.հարթակում ուսումնական նյութեր ներբեռնելու քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը, Թ.Նալբանդյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել 2019-20 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի 2-րդ կուրսի 1-ին կիսամյակի ամբիոնի գծով դասավանդվող դասընթացների առարկայական նկարագրերը, ընթացիկ ստուգման և քննական հարցաշարերը, Classroom էլ.հարթակում ներբեռնելու ուսումնական նյութերը՝ ըստ տրված ժամանակացույցերի:

ԼՍԵՑԻՆ 4- Դասալսումների ժամանակացույցի և կազմակերպման քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը, Ս. Մարությանը, Ա. Դալլաքյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – հաստատել 2019-2020 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի դասալսումների ժամանակացույցը ըստ դասացուցակի:

Նիստի նախագահ՝ *Վ.Ս.Կարապետյան*

Նիստի քարտուղար՝ *Թ.Է.Նալբանդյան*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

2019թ. հոկտեմբերի 21-ին տեղի ունեցած նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի.

ՕՐԱԿԱՐԳ

1. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա մագիստրատուրա 2-րդ կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկայի կազմակերպման հարցը:
2. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա բակալավրի 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների և մագիստրատուրա 1-ին և 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի աշխատանքային ժամանակացույցի կազզման հարցը:
3. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսի ավարտական աշխատանքի թեմաների և ղեկավարների քննարկում և հաստատում:
4. Ամբիոնի դասախոսների 2019 թվականին հրատարակած հոդվածների, գիտաժողովների նյութերի, գրքերի, ձեռնարկների, դասագրքերի քննարկում և ներկայացում:
5. Ամբիոնի դոկտոր, պրոֆեսոր Շ.Ոսկանյանի «Սոցիալական մանկավարժական մտքի պատմության ուրվագծեր» վերնագրով գրքի քննարկում:
6. Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ 1- Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա մագիստրատուրա 2-րդ կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկայի կազմակերպման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը, Ա. Ղազարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ –Ըստ ծանրաբեռնվածության և կազմված դասացուցակով կազմակերպել 2-րդ կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկան:

ԼՍԵՑԻՆ 2- Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա բակալավրի 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների և մագիստրատուրա 1-ին և 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի աշխատանքային ժամանակացույցի կազզման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը, Ս.Մարությանը, Ա.Դալլաքյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ըստ ղեկավարների ներկայացրած օրերի և ժամերի կազմել խորհրդատվությունների աշխատանքային գրաֆիկ: Ղեկավարները ներկայացրեցին

ուսանողների մինչ այժմ կատարած աշխատանքների, նրանց տրված հանձնարարությունների ընթացքի մասին:

ԼՍԵՑԻՆ 3- Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսի ավարտական աշխատանքի թեմաների և ղեկավարների քննարկում և հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը, Ա. Դալլաքյանը, Ք.Ասմարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսի ավարտական աշխատանքի թեմաները և ղեկավարներին:

ԼՍԵՑԻՆ 4- Ամբիոնի դասախոսների 2019 թվականին հրատարակած հոդվածների, գիտաժողովների նյութերի, գրքերի, ձեռնարկների, դասագրքերի քննարկում և ներկայացում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը, Ա. Դալլաքյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Քննարկել և հաստատել Ամբիոնի դասախոսների 2019 թվականին հրատարակած հոդվածների, գիտաժողովների նյութերի, գրքերի, ձեռնարկների, դասագրքերի ցանկը, տեղադրել համապատասխան ձևաչափում և ներկայացնել գիտահետազոտական կենտրոն:

ԼՍԵՑԻՆ 5- Ամբիոնի դոկտոր, պրոֆեսոր Շ.Ոսկանյանի «Սոցիալական մանկավարժական մտքի պատմության ուրվագծեր» վերնագրով գրքի քննարկում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Շ. Ոսկանյանը, Վ.Կարապետյանը, Ա. Դալլաքյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Ամբիոնի դասախոսական կազմի և ուսանողների հետ նախապես կազմակերպված քննարկման արդյունքում երաշխավորել Շ.Ոսկանյանի «Սոցիալական մանկավարժական մտքի պատմության ուրվագծեր» վերնագրով գիրքը մանկավարժական համալսարանի գիտամեթոդական հանձնաժողովին ներկայացնելու համար:

Ընթացիկ հարցեր.

ԼՍԵՑԻՆ 6- Մանկավարժություն և մեթոդիկա (նախադպրոցական կրթություն) հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսի նախորդ տարիների պետական որակավորման քննությունից «անբավարար» ստացած երկու ուսանողների՝ Մարտիրոսյան Մարիամի և Թովմասյան Նելլիի ավարտական թեմաների և գիտական ղեկավարների քննարկման և հաստատման հարցը:

Արտահայտվեցին- Վ.Կարապետյանը, Ք.Ասմարյանը, Հ.Սարգսյանը, Մ.Ավագյանը

Որոշեցին- Հաստատել ավարտական աշխատանքների ներկայացված թեմաները և գիտական ղեկավարներին:

ԼՍԵՑԻՆ 7 – 2019-20 ուստարվա 1-ին կիսամյակի ամբիոնի գծով դասավանդվող դասընթացների մշտադիտարկման ցուցիչների քննարկման հարցը:

ԶԵԿՈՒՅՈՂ- Վ.Կարապետյան, Թ.Նալբանդյան

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի դասախոսների Classroom էլ.հարթակում աշխատանքների վերաբերյալ մշտադիտարկումների ցուցիչները՝ կիսամյակային գնահատման համար, հաշվի առնելով ամբիոնի դասընթացների առանձնահատկությունները՝ շաբաթական ակտիվություն classroom հարթակում, առաջադրանքների և հանձնարարությունների բովանդակային համապատասխանությունը առարկայական նկարագրին, դասընթացի շրջանակներում լրացուցիչ նյութերի առկայություն, կիսամյակի ընթացքում մեկ գնահատվող առաջադրանքի առկայություն:

Լսեցին 8- Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ 4-րդ կուրսի 2-րդ կիսամյակում նախատեսվող ընտրովի դասընթացը վերանվանելու հարցը:

Արտահայտվեցին- Վ.Կարապետյանը, Հ.Խաչատրյանը, Ս.Մարությանը, Մ.Ամիրաղյանը, ովքեր իրենց ելույթներում կարևորեցին մեդիակրթության անհրաժեշտությունը նախադպրոցական կրթական համակարգում նորագույն տեխնոլոգիաների, անիմացիաների, համակարգչային խաղերի ներդրման անհրաժշտությունը:

Որոշեցին- Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ 4-րդ կուրսի 2-րդ կիսամյակի ընտրովի դասընթացը վերանվանել *«Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը նախադպրոցական կրթական հաստատության մանկավարժական գործընթացում»*, հաշվի առնելով նախադպրոցական կրթության տեղեկատվական տեխնոլոգիաների բացառիկ դերը նախադպրոցական ոլորտում կադրերի պատրաստման գործընթացում:

Նիստի նախագահ՝ Վ.Մ.Կարապետյան

Նիստի քարտուղար՝ Թ.Է.Նալբանդյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

2019թ. նոյեմբերի 15-ին տեղի ունեցած նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի.

ՕՐԱԿԱՐԳ

1. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ 4-րդ կուրսերի մանկավարժական և ՄԿԾ 2-րդ կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկայի արդյունքների քննարկում:
2. Ամբիոնի 90-ամյակին նվիրված միջոցառումների ծրագրի կազմակերպում, քննարկում:
3. Ֆակուլտետի ամբիոնի դասախոսների վերապատրաստման կազմակերպում, արդյունքների քննարկում:
4. Ամբիոնի հայցորդների ատեստավորման հարցը:

ԼՍԵՑԻՆ 1- Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ 4-րդ կուրսերի մանկավարժական և ՄԿԾ 2-րդ կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկայի արդյունքների քննարկում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը, Ա.Ղազարյանը:

Պրակտիկայի ղեկավար Ա. Ղազարյանը ներկայացրեց պրակտիկաների ընթացքը և ժամանակացույցը:

Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ 4-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկան ավարտվել է նոյեմբերի 15-ին, պրակտիկան կամփոփվի պրակտիկայի թղթապանակների պաշտպանությամբ և ուսանողները կգնահատվեն հանձնաժողովի կողմից: ՄԿԾ 2-րդ կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկան ավարտվել է նոյեմբերի 8-ին, որը ամփոփվել է ուսանողների ներկայացրած թղթապանակների գնահատմամբ՝ ղեկավարների կողմից:

ՈՐՈՇԵՑԻՆ- Պրակտիկայի արդյունքներն ընդունել ի գիտություն և հետագա աշխատանքներում հաշվի առնել արդյունավետ առաջարկները:

ԼՍԵՑԻՆ 2- Ամբիոնի 90-ամյակին նվիրված միջոցառումների ծրագրի կազմակերպում, քննարկում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը, Ա. Դալլաքյանը, Ս.Մարությանը, Ք. Ասմարյանը, Ա.Խուգեյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- կանխատեսել կազմակերպել քննարկումներ, կլոր-սեղաններ «21-րդ դարի նախադպրոցական կրթության հիմնախդնիրները» խորագրով առցանց գիտաժողով, տալ հանձնարարականներ աշխատանքները կատարելու վերաբերյալ:

ԼՍԵՑԻՆ 3- Ֆակուլտետի ամբիոնի դասախոսների վերապատրաստման կազմակերպում, արդյունքների քննարկում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը, Ա. Դալլաքյանը, Մ.Ամիրաղյանը, Մ.Ավագյանը:

Համալսարանի կողմից կազմակերպվող պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման դասընթացները ամբիոնի գծով կազմակերպվել էին նոյեմբերի 4-ից 15-ը: Ամբիոնի դասախոսները մասնակցել են դասընթացներին, ստացել են նոր գիտելիքներ, փոխանակել են կարծիքներ

ՈՐՈՇԵՑԻՆ- Առաջարկել, որ հետագա վերապատրաստումները կազմակերպելիս յուրաքանչյուր դասախոսի մասնագիտական կարողությունների հայտորոշման արդյունքում կարելի է հստակեցնել վերապատրաստվողների կարիքները և ավելի կոնկրետ խմբավորել վերապատրաստողների և վերապատրաստվողների խմբերը:

ԼՍԵՑԻՆ 4- Ամբիոնի հայցորդների ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը, Ա. Դալլաքյանը, Ս.Մարությանը:

Ամբիոնի հայցորդներ Գ. Գասպարյանը և Մ.Մակոյանը ներկայացրեցին իրենց հաշվետվությունները՝ ներկայացնելով 2019-2020 ուսումնական տարվա ընթացքում կատարած աշխատանքները:

ՈՐՈՇԵՑԻՆ-Հաշվի առնելով ամբիոնի հայցորդների՝ Գոհար Գասպարյանի և Մարգարիտա Մակոյանի ներկայացրած հաշվետվությունները ատեստավորել:

Նիստի նախագահ՝ *Վ.Ս.Կարապետյան*

Նիստի քարտուղար՝ *Թ.Է.Նալբանդյան*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

2019թ. դեկտեմբերի 6-ին տեղի ունեցած նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի.

ՕՐԱԿԱՐԳ

1. 2019-20 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստման հարցը:
2. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի և ԲԿԾ առկա 4-րդ և ԲԿԾ հեռակա 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների կատարման ընթացքի մասին:
3. Դասախոսների 2019 թ. գիտահետազոտական աշխատանքների և ընդհանուր գործունեության հաշվետվությունների ներկայացման հարցը:
4. Ամբիոնի դասախոսների 1-ին կիսամյակի դասալսումների քննարկման հարցը:
5. 2019-20 ուստարվա 1-ին կիսամյակի ամբիոնի գծով դասավանդվող դասընթացների մշտադիտարկման ցուցիչների քննարկման և վերահաստատման հարցը:
6. Ամբիոնի 2019 թվականի տարեկան հաշվետվության հաստատման հարցը:

ԼՍԵՑԻՆ 1- 2019-20 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ըստ ուսումնական պլանի և ծանրաբեռնվածության նախապատրաստվել 1-ին կիսամյակի քննաշրջանին, հաստատված քննական տոմսերով և հարցաշարերով: Քննությունից առաջ ուսանողների հետ կազմակերպել խորհրդատվություններ:

ԼՍԵՑԻՆ 2-Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի և ԲԿԾ առկա 4-րդ և ԲԿԾ հեռակա 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների կատարման ընթացքի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը, Ս.Մարությանը, Ա. Դալլաքյանը, Ա. Ղազարյանը, Մ.Ամիրաղյանը, Ա.Խուգեյանը, Ս.Հակոբյանը:

Յուրաքանչյուր ղեկավար նախապես ուղարկել էր հաշվետվություն՝ իր ուսանողների անուն, ազգանուն, աշխատանքի վերնագիր, կատարած աշխատանքի ընթացքի վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ընթացիկ աշխատանքները համարել բավարար և արդյունավետ, ինչպես նաև էլեկտրոնային հարթակում՝ ավարտական կուրսերի խորհրդատվությունների էջերում պարբերաբար պահպանել ուսանողների հետ հետադարձ կապը, շարունակել ուղղորդել նրանց:

ԼՍԵՑԻՆ 3- Դասախոսների 2019 թ. գիտահետազոտական աշխատանքների և ընդհանուր գործունեության հաշվետվությունների ներկայացման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը, Ա. Դալլաքյանը:

Ամբիոնի վարիչ Վ.Կարապետյանը ներկայացրեց, որ նշված ժամկետում և ուղարկված ձևաչափով դասախոսները պետք է լրացնեն իրենց 2019 թ. գիտահետազոտական աշխատանքների ցանկը, ինչպես նաև ամբիոնի էլ. հասցեին ուղարկել յուրաքանչյուր դասախոսի գիտամանկավարժական գործունեության տարեկան հաշվետվությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ-Ներկայացված ժամկետներում ավարտին հասցնել հանձնարարությունները:

ԼՍԵՑԻՆ 4- Ամբիոնի դասախոսների 1-ին կիսամյակի դասալսումների քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը, Ա. Դալլաքյանը, Ս. Մարությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ-Հաշվի առնելով դասալսումների արդյունքները կազմակերպել փոխադարձ քննարկումներ՝ փորձի փոխանակման և արդյունավետ ուսուցման մեթոդների արդյունավետ կիրառման շուրջ:

ԼՍԵՑԻՆ 5 – 2019-20 ուստարվա 1-ին կիսամյակի ամբիոնի գծով դասավանդվող դասընթացների մշտադիտարկման ցուցիչների քննարկման և վերահաստատման հարցը:

ԶԵԿՈՒՅՑՈՂ- Վ.Կարապետյան, Թ.Նալբանդյան

ՈՐՈՇԵՑԻՆ- Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի դասախոսների էլ.հարթակներում /Classroom/ *բովանդակային* ակտիվության վերաբերյալ կիսամյակային գնահատման համար վերանայել և ավելի հստակ ձևակերպել մշտադիտարկման ցուցիչները՝ ԲԿԾ և ՄԿԾ առկա ուսուցման

համակարգի կուրսերի համար՝ առարկայական նկարագրի, թեմատիկ տրոհման առկայություն՝ համապատասխան լրացումներով դասախոսների կողմից, ընթացիկ ստուգման, քննական հարցաշարերի առկայություն, նյութերի առկայություն՝ ըստ թեմատիկ տրոհման, կիսամյակի ընթացքում մեկ գնահատվող առաջադրանքի առկայություն:

Հեռակա ուսուցման համակարգի կուրսերի մշտադիտարկման համար նույնպես առանձնացվեցին մշտադիտարկման ցուցիչներ. Առարկայական նկարագրի համապատասխան լրացումներ դասախոսների կողմից, ընթացիկ ստուգման, քննական հարցաշարերի առկայություն, նյութերի կամ առարկայական ուսումնամեթոդական փաթեթի առկայություն, օնլայն միջանկյալ ստուգումների առկայություն (ըստ դեկանատի հանձնարարության, եթե տրվում է միջանկյալ ստուգումն անցկացնել էլ.հարթակում):

ԼՍԵՑԻՆ 6- Ամբիոնի 2019 թվականի տարեկան հաշվետվության հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել ամբիոնի 2019 թվականի տարեկան հաշվետվությունը:

Ընթացիկ հարցեր.

Նիստի նախագահ՝ *Վ.Ս.Կարապետյան*

Նիստի քարտուղար՝ *Թ.Է.Նալբանդյան*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

2020թ. հունվարի 17-ին տեղի ունեցած նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի.

ՕՐԱԿԱՐԳ

1. 2019-2020 ուս. տարվա 1-ին կիսամյակի քննությունների արդյունքների քննարկման հարցը:
2. 2019-2020 ուս.տարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների ուսումնամեթոդական փաթեթների, առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հաստատման և google classroom ներբեռնելու հարցը:
3. 2019-2020 ուս տարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների միջանկյալ ստուգման և քննական հարցաշարերի հաստատման հարցը:
4. 2019-2020 ուս տարվա դասալսումների կազմակերպման հարցը:
5. 2019-20 ուստարվա 2-րդ կիսամյակի ամբիոնի գծով դասավանդվող դասընթացների մշտադիտարկման ցուցիչների քննարկման հարցը:

ԼՍԵՑԻՆ 1- 2019-2020 ուս. տարվա 1-ին կիսամյակի քննությունների արդյունքների քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ-Քննությունների արդյունքների վերաբերյալ տեղեկությունն ընդունել ի գիտություն: Պարբերաբար վերանայել առարկաների բովանդակությունն ու քննական հարցաշարերը:

ԼՍԵՑԻՆ 2- 2019-2020 ուս.տարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների ուսումնամեթոդական փաթեթների, առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հաստատման և google classroom ներբեռնելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների ԱՈՒՄՓ-ները և ներբեռնել էլ.հարթակ ներկայացված ձևաչափերով: Ուշադիր լինել՝ առարկայական նկարագրերում նշված վերջնարդյունքները համապատասխանեցնել մասնագրի վերջնարդյունքներին: Առարկայական նկարագրերն ու թեմատիկ տրոհումները տեղադրել էլեկտրոնային հարթակ:

ԼՍԵՑԻՆ 3-2019-2020 ուս տարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների միջանկյալ ստուգման և քննական հարցաշարերի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը, Մ.ԱՄիրաղյանմ:

ՈՐՈՇԵՑԻՆ-Հաստատել 2019-2020 ուս տարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների միջանկյալ ստուգման և քննական հարցաշարերը, ինչպես նաև տեղադրել էլեկտրոնային հարթակի համապատասխան էջերում:

ԼՍԵՑԻՆ 4- 2019-2020 ուս տարվա դասալսումների կազմակերպման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը, Ս.Մարությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ-Հաստատել 2019-2020 ուս տարվա դասալսումների մատյանը և կազմակերպել դասալսումներ նշված ժամանակացույցով:

ԼՍԵՑԻՆ 5– 2019-20 ուստարվա 2-րդ կիսամյակի ամբիոնի գծով դասավանդվող դասընթացների մշտադիտարկման ցուցիչների քննարկման հարցը:

ԶԵԿՈՒՅՈՂ- Վ.Կարապետյան, Ա.Դալլաքյան, Հ.Խաչատրյան

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել էլ.հարթակում նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի դասախոսների բովանդակային ակտիվության վերաբերյալ կիսամյակային գնահատման համար ներկայացված ցուցիչները ըստ համապատասխան տոկոսների, հաշվի առնելով ամբիոնի դասընթացների առանձնահատկությունները:

Մշտադիտարկամ ցուցիչ	Տոկոս
1. Առարկայական նկարագրի, թեմատիկ տրոհման համապատասխան լրացումներ	25%
2. Ընթացիկ ստուգման, քննական հարցաշարեր	15%
3. Նյութերի առկայություն՝ ըստ թեմատիկ տրոհման	35%
4. Կիսամյակի ընթացքում մեկ գնահատվող առաջադրանք	20%
5. Հանձնարարությունները ներբեռնելուց թեմայի նշում	5%

Նիստի նախագահ՝ Վ.Ս.Կարապետյան

Նիստի քարտուղար՝ Թ.Է.Նալբանդյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

2020թ. փետրվարի 26-ին տեղի ունեցած նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի.

ՕՐԱԿԱՐԳ

1. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ 2-րդ կուրսի 2-րդ կիսամյակի ուսումնա-ճանաչողական պրակտիկայի նախապատրաստման, կազմակերպման հարցը:
2. ՄԿԾ 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի ընթացիկ երկկողմանի հաշվետվությունների ներկայացում՝ ուսանողների և ղեկավարների ներգրավմամբ:
3. Գեղարվեստական կրթության ֆակուլտետի Երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու Աննա Սիմոնյանի *«Ավագ նախադպրոցականի ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման հնարավորություններն առարկայական զարգացնող միջավայրի պայմաններում»* ուսումնամեթոդական ձեռնարկի քննարկման և Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի կողմից հրատարակման երաշխավորության ներկայացնելու հարցը:

ԼՍԵՑԻՆ 1- Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ 2-րդ կուրսի 2-րդ կիսամյակի ուսումնա-ճանաչողական պրակտիկայի նախապատրաստման, կազմակերպման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը, Ա.Ղազարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ըստ ծանրաբեռնվածության և հրամանների կազմակերպել ԲԿԾ 2-րդ կուրսի 2-րդ կիսամյակի ուսումնա-ճանաչողական պրակտիկան:

ԼՍԵՑԻՆ 2- ՄԿԾ 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի ընթացիկ երկկողմանի հաշվետվությունների ներկայացում՝ ուսանողների և ղեկավարների ներգրավմամբ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը, Ս.Մարությանը, Ա.Ղազարյանը, Ա. Դալլաքյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ-Շարունակել քննարկումները ուսանողների հետ՝ մինչև նախապաշտպանություն կազմակերպման ժամանակահատվածը:

ԼՍԵՑԻՆ 3 – Գեղարվեստական կրթության ֆակուլտետի Երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու

Աննա Սիմոնյանի *«Ավագ նախադպրոցականի ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման հնարավորություններն առարկայական զարգացնող միջավայրի պայմաններում»* ուսումնամեթոդական ձեռնարկի քննարկման և Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի կողմից հրատարակման երաշխավորության ներկայացնելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, Ա.Դալլաքյանը, Ս.Մարությանը, Մ.Ավագյանը, Ս.Հովսեփյանը, Հ.Սարգսյանը, Ա.Ղազարյանը:

Ելույթ ունեցողները անդրադառնալով ձեռնարկի կարևորությանը նշեցին, առարկայական միջավայրի բացառիկ գործառույթները հետաքրքրությունների ձևավորման գործընթացում:

ՈՐՈՇԵՑԻՆ- նկատի ունենալով Ա.Սիմոնյանի *«Ավագ նախադպրոցականի ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման հնարավորություններն առարկայական զարգացնող միջավայրի պայմաններում»* ուսումնամեթոդական ձեռնարկի տեսագործնական նշանակությունը՝ դրական կարծիքով այն ներկայացնել ֆակուլտետի խորհուրդ, հրատարակման երաշխավորություն ստանալու համար:

Նիստի նախագահ՝ Վ.Ս.Կարապետյան

Նիստի քարտուղար՝ Թ.Է.Նալբանդյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

2020թ. մարտի 26-ին տեղի ունեցած նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի.

ՕՐԱԿԱՐԳ

1. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա առկա ԲԿԾ 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի ընթացքի և հեռակա ուսուցման համակարգի ԲԿԾ 5-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի կազմակերպում մասին հարցերը:
2. ԲԿԾ առկա 4-րդ և հեռակա 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների և ՄԿԾ 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին հարցը:

ԼՍԵՑԻՆ 1- Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա առկա ԲԿԾ 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի ընթացքի և հեռակա ուսուցման համակարգի ԲԿԾ 5-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի կազմակերպում մասին հարցերը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, Ա.Ղազարյանը:

Ա.Ղազարյանը ներկայացրեց առկա ԲԿԾ 3-րդ կուրսի ընթացիկ հաշվետվությունը: Ներկայացրեց հեռակա 5-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի կազմակերպման ընթացակարգը՝ ժամանակացույցը և մանկապարտեզները, ուսանողներին և ղեկավարներին:

ՈՐՈՇԵՑԻՆ-Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 2-ԲԿԾ առկա 4-րդ և հեռակա 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների և ՄԿԾ 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի բոլոր ղեկավարները:

ՈՐՈՇԵՑԻՆ-Աշխատանքների ընթացքը գնահատել բավարար և արդյունավետ՝ հիմք ընդունելով ղեկավարների կողմից ուղարկված հաշվետվությունները, և ՄԿԾ 2-րդ կուրսի ուսանողների կողմից լրացված մագիստրոսական թեզի կիսամյակային աշխատանքների կատարման ձևաչափը:

Նիստի նախագահ՝ Վ.Ս.Կարապետյան

Նիստի քարտուղար՝ Թ.Է.Նալբանդյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

2020թ. ապրիլի 20-ին տեղի ունեցած նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի.

ՕՐԱԿԱՐԳ

1. «Նախադպրոցական մանկավարժության առկա խնդիրները» սեմինար-քննարկում Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ առկա ուսուցման 2-րդ և 3-րդ կուրսերում:
2. Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի գծով ԲԿԾ առկա 4-րդ կուրսերի ավարտական աշխատանքների և ՄԿԾ 2-րդ կուրսերի մագիստրոսական ատենախոսությունների նախապաշտպանությունների արդյունքների և հրապարակային պաշտպանության երաշխավորման հարցը:
3. Google classroom էլեկտրոնային հարթակում դասախոսների աշխատանքների ընթացքի մասին:
4. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ առկա ուսուցման համակարգի 1-ին կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկայի նախապատրաստման, կազմակերպման հարցը:

ԼՍԵՑԻՆ 1- «Նախադպրոցական մանկավարժության առկա խնդիրները» սեմինար-քննարկում Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ առկա ուսուցման 2-րդ և 3-րդ կուրսերում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Վ.Կարապետյանը, Ք.Ասմարյանը, Ա.Դալլաքյանը, Մ.Ամիրաղյանը:

Սեմինարը կազմակերպվել էր ամբիոնի դասախոս՝ Ք.Ասմարյանի նախաձեռնությամբ: Մասնակցեցին ամբիոնի դասախոսները: Ուսանողների հետ քննարկումները, նրանց առաջարկներն ու կարծիքները շատ արժեքավոր էին և տեղին:

ՈՐՈՇԵՑԻՆ- Նմանատիպ քննարկումները լինեն շարունակական և էլ ավելի համագործակցային:

ԼՍԵՑԻՆ 2-Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի գծով ԲԿԾ առկա 4-րդ կուրսերի ավարտական աշխատանքների և ՄԿԾ 2-րդ կուրսերի մագիստրոսական ատենախոսությունների նախապաշտպանությունների արդյունքների և հրապարակային պաշտպանության երաշխավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, Ս.Մարությանը, Ա.Դալլաքյանը, Ս.Հովսեփյանը, Ի.Պոնոմարենկոն

ՈՐՈՇԵՑԻՆ- Նախապաշտպանության արդյունքների վերլուծության հիման վրա /ապրիլի 13-17/ երաշխավորել հրապարակային պաշտպանության ներկայացված ավարտական աշխատանքներն ու մագիստրոսական ատենախոսությունները:

ԼՍԵՑԻՆ 3-Google classroom էլեկտրոնային հարթակում դասախոսների աշխատանքների ընթացքի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, Թ.Նալբանդյանը

Ամբիոնի մասնագետը ներկայացրեց մշտադիտարկման արդյունքները, դասախոսների բացթողումներն ու թերացումները:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հետագա աշխատանքներում շտկել թերացումները, հաշվետվության մեջ նշված կետերին համապատասխան:

ԼՍԵՑԻՆ 4-Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ առկա ուսուցման համակարգի 1-ին կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկայի նախապատրաստման, կազմակերպման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, Ա.Ղազարյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Մանկավարժահետազոտական պրակտիկան կազմակերպել ըստ ներկայացված դասացուցակի, հեռավար ձևաչափով, ստեղծել պրակտիկայի էլեկտրոնային հարթակ, որտեղ կտեղադրվեն մանկավարժահետազոտական պրակտիկայի նկարագիրը, աշխատանքի ընթացակարգը և պրակտիկայի թղթապանակի, հաշվետվության ձևաչափը, որը պետք է լրացնեն պրակտիկայի ընթացքում:

Նիստի նախագահ՝ Վ.Ս.Կարապետյան

Նիստի քարտուղար՝ Թ.Է.Նալբանդյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

2020թ. մայիսի 12-ին տեղի ունեցած նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի.

ՕՐԱԿԱՐԳ

1. Հեռակա ուսուցման համակագի 5-րդ կուրսի ուսանողների ավարտական աշխատանքների նախապաշտպանության արդյունքների ներկայացում և հրապարակային պաշտպանության երաշխավորելու հարցը:
2. Ամփոփիչ ավարտական քննությունների նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին:
3. 2019-2020 ուս.տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի նախապատրաստման հարցը:

ԼՍԵՑԻՆ 1- Հեռակա ուսուցման համակագի 5-րդ կուրսի ուսանողների ավարտական աշխատանքների նախապաշտպանության արդյունքների ներկայացում և հրապարակային պաշտպանության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Նախապաշտպանության արդյունքների հիման վրա ներկայացված ավարտական աշխատանքները երաշխավորել հրապարակային պաշտպանության:

ԼՍԵՑԻՆ 2- Ամփոփիչ ավարտական քննությունների նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, Թ.Նալբանդյանը, Ա.Խուգեյանը

Թ.Նալբանդյանը նշեց, որ 2019-2020 ուս.տարվա ամփոփիչ ավարտական քննությունները կազմակերպվելու են առցանց ձևաչափով՝ պայմանավորված covid-19 համավարակով: Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գրախոսությունները ևս կազմակերպվում է առցանց ձևաչափով: Ամբիոնի մասնագետը ներկայացրեց գործընթացը կազմակերպելու ընթացակարգը՝ անհրաժեշտ ներբեռնվող նյութերի ուղարկման ժամկետները:

ՈՐՈՇԵՑԻՆ-Նշված ժամկետներում կազմակերպել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ղեկավարների կարծիքների և գրախոսությունների գործընթացները և ուղարկել ամբիոնի էլեկտրոնային հասցեին:

ԼՍԵՑԻՆ 3-2019-2020 ուս.տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի նախապատրաստման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը

Քննաշրջանը ևս կազմակերպվում է առցանց ձևաչափով՝ պայմանավորված covid-19 համավարակով:

Ամբիոնի մասնագետը ներկայացրեց քննության կազմակերպման ընթացակարգը՝ նշելով, քննական տոմսերի տեղադրման և քննության ընթացքում ուսանողների տոմսն ընտրելու քայլերին, նշելով, որ քննության ընթացքը պարտադիր դասախոսի կողմից պետք է տեսաձայանագրվի, այնուհետև տեղադրվի էլեկտրոնային հարթակ:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ըստ ուղարկված ժամանակացույցի առցանց ձևաչափով կազմակերպել քննությունները՝ ընդունելով ի գիտություն ներկայացված պահանջները:

Նիստի նախագահ՝ *Վ.Ս.Կարապետյան*

Նիստի քարտուղար՝ *Թ.Է.Նալբանդյան*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11

2020թ. հունիսի 12-ին տեղի ունեցած նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի.

ՕՐԱԿԱՐԳ

1. Ամփոփիչ ավարտական քննությունների արդյունքների քննարկման հարցը:
2. 2019-20 ուսումնական տարվա ամբիոնի դասախոսների ծանրաբեռնվածության կատարման ընթացքի մասին քննարկում:
3. ԲԿԾ 2-րդ և 3-րդ կուրսերի ուսումնաճանաչողական պարկտիկաների պաշտպանության, հաշվետվությունների ներկայացման արդյունքների մասին:

ԼՍԵՑԻՆ 1-Ամփոփիչ ավարտական քննությունների արդյունքների քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Գործընթացի արդյունավետությունը գնահատել բավականին լավ:Ամբիոնի վարիչ Վ.Կարապետյանը ներկայացրեց առցանց ձևաչափով ամփոփիչ ավարտական քննությունների անցկացման ընթացքում առաջացած դժվարությունները, տեխնիկական խնդիրները, որոնք տեղում շտկվում էին և չէին խափանում քննության ընթացքը:

ԼՍԵՑԻՆ 2-2019-20 ուսումնական տարվա ամբիոնի դասախոսների ծանրաբեռնվածության կատարման ընթացքի մասին քննարկում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը

ՈՐՈՇԵՑԻՆ-Աշխատանքները համարել բավարար և ընդունել ի գիտություն ընթացիկ պահանջները:

ԼՍԵՑԻՆ 3- ԲԿԾ 2-րդ և 3-րդ կուրսերի ուսումնաճանաչողական պարկտիկաների պաշտպանության, հաշվետվությունների ներկայացման արդյունքների մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ուսումնաճանաչողական պրակտիկաների պաշտպանության, հաշվետվությունների ներկայացման գործընթացը համարել լավ:

Նիստի նախագահ՝ Վ.Ս.Կարապետյան

Նիստի քարտուղար՝ Թ.Է.Նալբանդյան